ՆԱԽՆԱԿԱՆ ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՄՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԻ ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄ

2025

ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ԳՈՐԾ

ԹԵՍՏ 2

ԽՄԲԻ ՀԱՄԱՐԸ

ՆՍՏԱՐԱՆԻ ՀԱՄԱՐԸ

Հարգելի՛ ուսուցիչ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք: Եթե չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք դրան անդրադառնալ ավելի ուշ:

Թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը կարող եք օգտագործել սևագրության համար:

1 Նշվածներից ո՞րն է օգտագործվում 750 հարգի ամուսնական մատանու փայլեցման ժամանակ:

1) ֆիլեռը
2) փայլեցման սարքը
3) ինժեկտորը
4) վալցը

2 Որքա՞ն է 135մմ X 82մմ X 4 մմ չափսերով 999,9 հարգի պլատինի ձուլակտորի քաշը (21.45 գ/սմ³):

1) 949.704 գ
2) 949.406 գ
3) 949.806 գ
4) 949.625 գ

3 Ոսկու հարգի փոփոխման դեպքում՝ 32.5 գրամ 750 հարգի ոսկու համաձուլվածքից 585 հարգի ոսկու համաձուլվածք ստանալու համար քանի՞ գրամ խառնուրդ (լիգատուրա, ալոյ) է անհրաժեշտ:

1) 9.75 գ
2) 9.60 գ
3) 9.50 գ
4) 9.16 գ

4 Որքա՞ն է 125 մմ X 90 մմ X 6 մմ չափսերով 999,9 հարգի արծաթի ձուլակտորի քաշը: (10.50 գ/սմ³):

1) 708.75 գ
2) 708.485 գ
3) 708.775 գ
4) 708.85 գ

5 Քանի՞ գրամ 999,9 հարգի ոսկի է անհրաժեշտ՝ 35 գրամ 585 հարգի ոսկու համաձուլվածքից 750 հարգի ոսկու համաձուլվածք ստանալու համար:

1) 22.5 գ
2) 23.1 գ
3) 22.2 գ
4) 23.7 գ

6 Նշված մետաղներից ո՞րն է ամենադժվարահալը:

1) պալադիումը
2) ոսկին
3) իրիդիումը
4) պլատինը

7 Ոսկու հարգի փոփոխման դեպքում՝ 7.5 գրամ 999,9 հարգի ոսկուց 375 հարգի ոսկու համաձուլվածք ստանալու համար քանի՞ գրամ խառնուրդ (լիգատուրա, ալոյ) է անհրաժեշտ:

1) 12.48 գ
2) 12.23 գ
3) 12.65 գ
4) 12.88 գ

8 Որքա՞ն է 180 մմ X 85 մմ X 4 մմ չափսերով 999,9 հարգի ոսկու ձուլակտորի քաշը (19.3 գ/սմ^3):

1) 1085.25 գ
2) 1315.82 գ
3) 1281.15 գ
4) 1181.16 գ

9 Նշվածներից ո՞րը թանկարժեք քար չէ:

1) նեֆրիտը
2) սապֆիրը
3) ռուբինը
4) զմրուխտը

10 Որքա՞ն է 170 մմ X 100 մմ X 8 մմ չափսերով 999,9 հարգի ոսկիումի ձուլակտորի քաշը (12.4 գ/սմ³):

1) 1686.8 գ
2) 1686.2 գ
3) 1686.6 գ
4) 1686.4 գ

11 Նշված հարգերից ո՞րն է համապատասխանում ՀՀ-ում ընդունված ոսկու համաձուլվածքի դրոշմակնքման չափանիշին:

1) 913
2) 585
3) 333
4) 417

12 Քանի՞ գրամ 999,9 հարգի արծաթ է անհրաժեշտ՝ 15 գրամ 875 հարգի արծաթի համաձուլվածքից 925 հարգի արծաթի համաձուլվածք ստանալու համար:

1) 10 գ
2) 9 գ
3) 10.5 գ
4) 9.3 գ

13 Նշված հարգերից ո՞րն է համապատասխանում ՀՀ-ում ընդունված արծաթի համաձուլվածքի դրոշմակնքման չափանիշին:

1) 999
2) 875
3) 910
4) 845

14 Ի՞նչ երկարությամբ ձող է անհրաժեշտ 19.75 միլիմետր ներքին տրամագծով մատանի պատրաստելու համար, եթե ձողի հաստությունը 4.5 միլիմետր է:

1) 76.745 մմ
2) 76.500 մմ
3) 76.375 մմ
4) 76.145 մմ

15 **Նշվածներից ո՞րն է թանկարժեք մետաղ։**

1) արծաթը
2) տիտանը
3) մոլիբդենը
4) վոլֆրամը

16 **Նշվածներից ո՞րն է խորհուրդ տրվում կիրառել սառը արծնեպատված (էմալապատված) իրերի վերանորոգման ժամանակ։**

1) կոշտ մեխանիկական հղկումը
2) հղկաթղթումը (մանր հղկաթղթով)
3) թամբլերային փայլեցումը
4) երկարատև տաքացումը

17 **Նշվածներից ո՞րն է քարերի տեղադրման տեսակ։**

1) բորներ-կրապանային
2) շարժական
3) բորներային
4) անշարժ

18 **Ո՞ր ջերմաստիճանում *չի* հալվի ոսկին։**

1) 1065 °C
2) 960,5 °C
3) 2988,8 °C
4) 1063 °C

19 **Ո՞ր գործողությամբ պետք *չէ* սկսել զարդերի վերանորոգումը։**

1) զոդմամբ
2) լվացմամբ
3) կշռմամբ
4) գրանցմամբ

20 **Հետևյալ գործիքներից ո՞րն է օգտագործվում լարաձգման ժամանակ։**

1) մեղրամոմը
2) հարթաշուրթը
3) վակումը
4) ծծմբային թթուն

21 **Տրվածներից 3-ը օգտագործվում են գլոցման և լարաձգման եղանակով մշակման ժամանակ։ Նշել դրանց համարները։** ***(3 միավոր)***

1. Գայլիկոնը
2. Լարաձգման տախտակը(ֆիլլեր)
3. Ֆոեզները
4. Գծագրական կարկինը
5. Մեղրամոմը
6. Ձուլումը
7. Կլորաշուրթը
8. Շտանգեն-ցիրկուլը
9. Ձառը

22 **Տրվածներից 3-ը *չի* օգտագործվում փականագործական աշխատանքների կատարման ժամանակ։ Նշել դրանց համարները։** ***(3 միավոր)***

1. Մուրճը
2. Մոմի զոդիչը
3. Հատիչը
4. Գայլիկոնը
5. Նրբասղոցը
6. Մոդելային մոմը
7. Ֆտորաջրածնային թթուն (պլավիկյանը)
8. Շտանգեն-ցիրկուլը
9. Խարտոցը

23 **Տրվածներից 3-ը *չի* օգտագործվում ձուլման եղանակով մանրակների պատրաստման ժամանակ: Նշել դրանց համարները:** ***(3 միավոր)***

1. Մուֆելային վառարանը
2. Գլոցման սարքը
3. Ունելյակը (պինցետ)
4. Ապակյա խառնիչ ձողը
5. Հալամանի բռնիչը
6. A4 ֆորմատի տպագրական թուղթը
7. Զոդանյութը (припой)
8. Խառնիչը (միքսեր)
9. Գիպսը

24 **Տրված պնդումներից 3-ը համապատասխանում են մասնագիտական ներածության և նյութագիտության դրույթներին: Նշել դրանց համարները:** ***(3 միավոր)***

1. Ռոդիումը սպիտակ դեղնավուն մետաղ է, կարծր, քիմիապես կայուն է թթունների միջավայրում, բնության մեջ ռոդիումը հանդիպում է ինքնածին արծաթի հետ:
2. Պալադիումի քիմիական նշանն է՝ Pt:
3. Չժանգոտվող պողպատները պարունակում են փոքր քանակությամբ օսմիում և ռուտենիում:
4. Իրիդիումի խտությունը՝21,45գ/սմ^3 է:
5. ՀՀ-ում ընդունված պալադիումի համաձուլվածքն է՝ 750-ը:
6. ՀՀ-ում ընդունված ոսկու համաձուլվածքն է՝ 916-ը:
7. ՀՀ-ում ընդունված արծաթի համաձուլվածքն է՝ 800-ը:
8. ՀՀ-ում ընդունված պլատինի համաձուլվածքն է՝ 900-ը:
9. Ոսկու հալման ջերմաստիճանն է 1083^{0}C-ը:

25 **Տրվածներից 3-ի օգտագործումը պարտադիր *չէ* շղթաների պատրաստման ժամանակ: Նշել դրանց համարները:** ***(3 միավոր)***

1. Զոդման սարքը
2. Ծծմբային թթուն
3. Հալումը
4. Ազոտային թթուն
5. Զոդումը
6. Գլոցումը (վալցովկան)
7. Գրիչը
8. Նրբախարտոցը (նաթֆիլը)
9. Զոդանյութը

26 **Տրվածներից 3-ը օգտագործվում են ոսկերչական իրի համար նախատեսված համաձուլվածքի պատրաստման ժամանակ: Նշել դրանց համարները:** ***(3 միավոր)***

1. Նրբախարտոցը
2. Կշեռքը
3. Արծաթը (Ag)
4. Վոլֆրամ (W)
5. Լարաձգման տախտակ (ֆիլլեր)
6. Շտանգեն-ցիրկուլը
7. Միկրոմետրը
8. Պղինձը (Cu)
9. Մուրճը

27 **Տրվածներից 3-ը *չի* օգտագործվում ոսկյա իրերի նորոգման աշխատանքների կատարման ժամանակ: Նշել դրանց համարները:** ***(3 միավոր)***

1. Փայլեցման սարքը
2. Ոսկու զոդանյութը
3. Շտանգեն-ցիրկուլը
4. Արքայաջուրը
5. Ինժեկտորը
6. Խոշորացույցը
7. Միկրոմետրը
8. Արծաթի զոդանյութը
9. Կշեռքը

28 **Տրվածներից 3-ը օգտագործվում են ոսկերչական զարդերի հավաքման և մշակման պրոցեսի ժամանակ: Նշել դրանց համարները:** ***(3 միավոր)***

1. Անագե զոդանյութը
2. Ձուլամոմը
3. Բոռ-մեքենան
4. Ինժեկտորը
5. Ոսկերչական դազգահը
6. Սառը արծնը (էմալ)
7. Զոդումը
8. Մոմի զոդիչը
9. Ռետինի մամլիչը (վուլկանիզատորը)

29 **Տրվածներից 3-ը *չի* օգտագործվում մոդելային մոմից մանրակների պատրաստման ժամանակ: Նշել դրանց համարները:** ***(3 միավոր)***

1. Այրիչը
2. Գծագրական կարկինը
3. Ազոտական թթուն
4. Խարտոցը
5. Չափիչ գործիքը
6. Բուրան
7. Մուրճը
8. Լանցետը
9. Նրբասղոցը

30 **Տրվածներից 3-ը օգտագործվում են հյուսվածքային տեխնիկայով (Ֆիլիգրան) կիսապատրաստվածք ստանալու համար: Նշել դրանց համարները:** ***(3 միավոր)***

1. Մոմի զոդիչը
2. Խոշոր ֆրեզները
3. Ռետինե մամլիչը
4. Հարթաշուրթը
5. Ազոտային թթուն
6. Ռետինե կաղապարը
7. Թիթեղային զոդանյութը
8. Լարաձգման տախտակը
9. Ինժեկտորը